

ՀՈՒՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СТАТЬИ И СООБЩЕНИЯ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԱՎԱՂՄԱՆ ՄԻ ՆՈՐ ՓՈՐՁ

(Խ. Իշխանյանի «Պատկերազարդ պատմություն հայոց»
գրքի մասին)

Մ. Ա. ԿԱՏՎԱՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խ. Իշխանյանի «Պատկերազարդ պատմություն հայոց» գիրքը տպագրել է «Արևիկ» հրատարակչությունը, 1989 և 1990 թթ., գրող Հայկ Խաչատրյանի խմբագրությամբ:

Նախածանոթությունում գիրքը հասցեագրվում է դպրոցական միջին և բարձր տարիքի աշակերտներին, ազդարարելով, որ հեղինակը «գրույցների ձևով ներկայացնում է հայ ժողովրդի պատմությունը՝ սկսած հայոց լեզվի ու հայերի ծագման ժամանակաշրջանից մինչև Վաղարշ Երկրորդ Արշակունու գահակալությունը (185 թ.)»: Եվ այդ ամենը գրքի մոտ 85 էջի վրա, քանի որ մնացած 66 էջը զբաղեցնում են պատկերազարդումները:

Գրքի սկզբում հեղինակն իր ընթերցողներին խոստանում է ներկայացնել «հզոր ու արժանահավատ պատմական աշխատություն», խրատում նրանց, որ «մի ժողովրդի պատմությունը գրելու համար փաստերը բավական չեն: Անհրաժեշտ են պատմաբանի գիտելիքներ, պատմական ժամանակների զգացողություն և տրամաբանություն: Հմուտ պատմաբանն է, որ խոսեցնում է փաստերը, ինքն էլ հասկանում նրանց լեզուն, բովանդակությունը» (էջ 8):

Սակայն գրքի դրեթե ամբողջ շարադրանքն ու բովանդակությունը, ցավով, ապացուցում են, որ հեղինակը պատմության բարդ հարցերի նկատմամբ ցուցաբերում է կամահաճո և ոչ մասնագիտական մոտեցում, բնավ չառաջնորդվելով իր իսկ քարոզած վերոհիշյալ խոստաներով ու բարոյախոսություններով: Գրքի էջերն առեւտր են փառերի կամայական մեկնաբանություններով, մերկապարանոց ու չկոադատված ենթադրություններով կամ հայտարարություններով, այս կամ այն հեղինակի մտքերից առեւտրած, բայց «չմարսած» փշրանքներով, պատմական աշխարհագրության հանրածանոթ գիտելիքների անկատարությամբ, այլազան սխալներով ու վրիպումներով:

Այսպես, հեղինակն ամենուր գործածում է «հայ ժողովրդի ծագում» ոչ գիտական հասկացությունը, հաշվի չառնելով կամ չիմանալով, որ ժողովուրդները չեն «ծագում», այլ կազմավորվում են աստիճանաբար, և այդ կազմավորման դարավոր ընթացքն ավարտվում է միմիայն պատմական զարգացման որոշակի գործոնների ու հատկանիշների լիակատար ձևավորմամբ՝ ընդհուպ մինչև նրանց ընդհանրական ինքնանվանման դրսևորումը:

Հեղինակն իր անփորձ ընթերցողների՝ դպրոցականների համար սահմանում է ժողովրդակազմավորման մի բանաձև, ըստ որի՝ «հայերի ծագում նշանակում է հայոց լեզվի ծագում, և երբ որոշում ենք, թե երբ և որտեղ է ծնվել հայոց լեզուն, գրանով որոշում ենք, թե երբ և որտեղ են ծնվել այդ լեզվով խոսողներն ու մտածողները» (էջ 6): Նույն պարզունակ և սահմա-

նափակ բանաձևեր կրկնվում է նաև գրքի հաջորդ էջերում՝ «հայ ժողովուրդը նշանակում է հայոց լեզուն» (էջ 10)։ Այսինքն՝ բացարձակացնելով «ժողովուրդ» գիտական ստորոգծության միայն մեկ կարևոր հատկանիշը՝ լեզուն, և անտեսելով մյուս բոլոր ոչ պակաս կարևոր հատկանիշները, հեղինակն այնուհետև ինքնավստահ եզրակացնում է, որ հայ ժողովուրդը կազմավորվել է հնդեվրոպական նախալեզվի տրոհումից անմիջաբար հետո, իր խոսքերով՝ «հայոց լեզուն և հայերը ծագել են մ. թ. ա. 4-րդ հազարամյակում, հավանաբար, այդ հազարամյակի կեսերին կամ երկրորդ կեսին, Հայկական լեռնաշխարհում», «մեզանից ավելի քան 5000 տարի առաջ» (էջ 15)։

Զավեշտական այդ բանաձևին հավատացող աշակերտները տրամաբանորեն պիտի եզրակացնեն, որ հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ մտնող մյուս բոլոր ժողովուրդները նույնպես «ծագել են» հնդեվրոպական նախալեզվի տրոհումից անմիջաբար հետո, «մեզանից ավելի քան 5000 տարի առաջ»։ Բայց հեղինակը հեշտությամբ չլուծում է նաև տրամաբանական այդ հակասությունը. նա իր հարցասեր ընթերցողներին արդեն տարհամոզում է, թե «աշխարհի բոլոր ժողովուրդների համար չէ, որ մայրենի լեզուն գրեթե ամբողջ տարբերիչ առանձնահատկությունն է» (էջ 10)։ Բայց քանի որ աշխարհի բազմաթիվ ժողովուրդներ չեն կաղապարվում նրա սահմանած վերոհիշյալ բանաձևի մեջ, ուստի այդ ժողովուրդների համար առաջարկվում է մի այլ «գլխավոր տարբերիչ առանձնահատկություն»։ Օրինակ, իսպանացիները, արգենտինացիները, չիլիացիները, ուրուգվայցիները, — սովորեցնում է հեղինակը, — խոսում և մտածում են իսպաներեն, նրանց ազգային տարբերությունները գալիս են պետական հպատակությունից և այլ գործոններից։ Նույնը վերաբերում է անգլիախոս և անգլերեն մտածող ժողովուրդներին» (էջ 10)։ Իսկ եթե հետաքրքրասեր ընթերցողները, աստված մի արասցե, մատնանշեն «բազմալեզուն» հրեաներին, ապա հնարագետ հեղինակը կանխավ պատասխանում է նաև այդ հարցին. «Այլ է հրեաների հարցը, որոնց ազգային գլխավոր հատկանիշը մոլոսեստկան կրոնն է. շատ հարյուրամյակների հրեաները գերմանախոս (իդիշ), իսպանախոս, անգլիախոս, վրացախոս էին, բայց պահպանվում էին» (էջ 10)։

Այսպիսով, հայերի համար «ժողովուրդ» կոչվելու գլխավոր հատկանիշը հեղինակը համարում է հայոց լեզուն, հրեաների համար՝ մոլոսեստկան կրոնը, ուրիշ բազմաթիվ ժողովուրդների համար՝ պետական հպատակությունը։ Կարծում ենք, որ ավելորդ են մեկնաբանությունները։ Այդ իրարանջատ և խառնաշփոթ բանաձևերի սահմանման հիմնական պատճառն այն է. որ հեղինակն անտեղյակ է «ժողովուրդ» ստորոգծության գիտական և լիակատար բնորոշմանը։

Գրքի հեղինակին սովորաբար չեն հետաքրքրում պատմագիտության նըվաճումներն ու ապացույցները, որովհետև դրանք կաշկանդում են նրա կրքոտ երևակայությունն ու կամայական բանաձևերը։ Օրինակ, գիտնականները պարզել են, որ Աբադի նարամ-Սուէն թագավորի (մ. թ. ա. 2236—2200 թթ.) և էբլայի արձանագրություններում հիշատակվող Արմանում քաղաքը գտնվել է Ասորիքում, էբլա քաղաքից ոչ հեռու։ Ապացուցված է նաև, որ Արմանում քաղաքի բնակիչներն էբլայի բնագրերում հիշատակվում են *ar-mi^{ki}*, որը *ar-mi*, *ar-amī*, *arammī*, *aramu* գրելաձևերով հայտնի սեմական ցեղանվանումն է և վերաբերում է արամեացիներին¹։ Սակայն Ռ. Իշխանյանը, անտեսելով այդ ամենը, Արմանում անվանումը ներկայացնում է Միջագետքի բնակիչներից իբրև հայ ժողովուրդին և Հայաստանին տրված անվանում (էջ 26—27)։ Ապա՝ նույնքան անվրդով ու ինքնավստահ նա ուղեցանում է, որ էբլայի «արձանագրությունների մեջ հիշվում են նայա ժողո-

¹ И. М. Дьяконов. Значение Эблы для истории и языкознания. Заключительная статья.—В кн.: Древняя Эбла (Раскопки в Сирии), М., 1985, с. 336—337.

Վերջի մարդիկ, որոնք մի այլ երկրից եկած են եղել էրլա: Ահա, դա էլ հայ անվանման առաջին հիշատակությունն է՝ Ք. ա. 3-րդ հազարամյակի երկրորդ կեսին» (էջ 28):

Եվ այսպես, հեղինակի կախարդական դրշով «հնարագործվում է» պատմական մի նոր «ճշմարտություն», ըստ որի՝ մ. թ. ա. III հազարամյակի երկրորդ կեսին Հայկական լեռնաշխարհում արդեն գոյություն ունեւր ոչ միայն միասնական հայկական պետություն, այլև միասնական ժողովուրդ՝ իր «հայ» ինքնանվանումով հանդերձ:

Այնուհետև, մի կողմ դնելով իր «հեղաշրջիչ տեսությունը», գրքի հեղինակը հայկական միասնական պետության և հայ ժողովրդի նոր հավաքածո է «հայտնաբերում» մ. թ. ա. XV—XIII դդ. խեթական արձանագրություններում: Հոգ չէ, որ գիտնականները ցարդ բանավիճում են խեթական աղբյուրներում խայաշա և Ացցի հորջորջվող (համանուն բնակավայրերի անվանումներով) մերձակեծվյալ ցեղային իշխանության էթնիկական պատկանելության, նրա տեղորոշման (սկզբնատարածքի) և հետագա սահմանների շուրջ՝ արտահայտելով տարբեր և իրարամերժ ենթադրություններ: Գրքի հեղինակը դարձյալ անխուով ինքնավստահությամբ հայտարարում է. «Այդ ժամանակաշրջանում խեթերը Հայաստանի համար գործածում էին նաև Հայասա-Ազգի անունը: Դրանով նրանք կոչում էին հայոց միացյալ պետությունը» (էջ 30):

«Հայկական այդ միասնական պետությունը» հեղինակի երևակայությամբ մ. թ. ա. 15-րդ դարի վերջերին» «փուլովեց, բաժանվեց առանձին մասերի» (էջ 33): Ընթերցողներին ինչու՞ կամ ինչպե՞ս հարցներին գրքում պատասխան չի տրվում: Այնուհետև հեղինակն իր երևակայածին երկիրն անվանում է «մասնատված Մեծ Հայք», որտեղ «կային անջատ, հաճախ միմյանց թշնամի հայկական իշխանություններ ու թագավորություններ» (հավանաբար զարգացած ավատատիրական կարգերիս բնորոշ հարաբերությունների տպավորիչ նմանակությամբ), ավելացնելով, որ արդեն «զգացվում էր երկիրը միավորելու պահանջ» (էջ 33):

Այնուհետև հեղինակն ուսուցանում է, որ Միջագետքի թագավորները մ. թ. ա. XIII դարի վերջից արդեն Հայաստանն անվանում էին Նաիրի (հավանաբար մոռացել էին բաղձալի Արմանի անվանումը): Ի դեպ, հավանաբար հեղինակին հուշենք, որ «Նաիրի երկրներ» անվանումն առաջին անգամ հանդիպում է ոչ թե մ. թ. ա. XIII դարի վերջում, այլ մ. թ. ա. XV դարում, Թեւար-Ռամահից գտնված մի բնագրում:

Ընդօրինակելով մի շարք հնացած և սխալ ենթադրություններ՝ հեղինակն իր գրքույկում փորձում է դրանք ներկայացնել իբրև հաստատված և անառարկելի ճշմարտություններ: Օրինակ, նա գրում է, որ Այրարատ է կոչվել նախ «Վանա լճի շրջակայքը», իսկ ավելի ուշ՝ Մեծ Հայքի կենտրոնական մասը (էջ 42), կամ՝ Թիզլատսլախասար I թագավորը «հարձակվեց նաև Մեծ Հայքի հարավային աշխարհի՝ Աղձնիքի (Ալդիի) վրա, որտեղ այդ ժամանակ սկսել էին իշխել փոյուզիացիները» (էջ 38), կամ՝ Ուրմե-Արմե և Շուբրիա է կոչվել Աղձնիքի Սասուն գավառը (էջ 70) և այլն: Առավել անհեթեթ է նրա այն պնդումը, որ Փոյուզիան իբր «արևմուտքից հարևան էր Հայքին» (էջ 38): Մինչդեռ հանրահայտ է, որ Փոքր Ասիայի արևմտյան մասում գտնվող Փոյուզիա երկիրը ոչ միայն որևէ կողմից սահմանակից չի եղել Հայաստանին, այլ դրանց միջև ձգվող շուրջ 650—700 կմ տարածքում բնկած էին մի քանի ընդարձակ երկրներ՝ Կապադովկիան, Գաղատիան, Լիկոնիան: Հեղինակի պատմաաշխարհագրական «գիտելիքների» ակնառու նմուշ է նաև «Հայկական լեռնաշխարհ» և «Մեծ Հայք» հասկացությունների նույնացումը (էջ 8):

Հեղինակն իր ընթերցողներին հրահանգում է, թե «ճիշտ չեն այն մարդիկ, որոնք նորենացու գրքում եղած Հայկի ու Բելի, Արամի, Արայի ու Շամիրամի պատմությունները համարում են առասպել» (էջ 49): Հայ ժողո-

վերդական հնագույն և վեհապատիվ առասպելները գիտականորեն մեկնաբանելու, դրանց իմաստն ու խորհուրդը հասկանալու կամ գնահատելու համար պահանջվում են բազմակողմանի և քաջահմուտ մասնագիտական իմացություններ: Սակայն նման գիտելիքների հանդեպ հակակրոնյամբ և նախապաշարմունքով լցված հեղինակը, կարծելով, որ «առասպելը» սնոտի, անարժեք ու խոտելի հասկացություն է, ջանում է հայոց հնադարյան դիցաբանական առասպելները ներկայացնել որպես իրական պատմություններ: Այսպես, նա գրում է, որ «Թորդոմի որդի Հայկը իր գերդաստանով ու զորքով մի ժամանակ բնակվել է Միջագետքում՝ Բաբելոնի մոտակայքում: Սա ճիշտ պետք է լինի, քանի որ, նախ՝ ինչպես վկայում են որոշ սեպագիր արձանագրություններ և այլ աղբյուրներ, Միջագետքում միշտ եղել է հայկական բնակչություն: Այսպիսով՝ Հայկն իր զորքով, հավանաբար, զինվորական ծառայության մեջ է եղել Միջագետքում» (էջ 49): Ի դեպ, Բել աստվածը նույնպես համարվում է իրական զորավար (էջ 50): Բայց գրքի մի այլ էջում ընթերցողը հանդիպում է «Արարատի թագավորության ժամանակ հայերի գերագույն աստվածը Հայկն էր (Հալդը)» անհետևողական ու հակասական նախադասությանը (էջ 112):

Հեղինակը «լուսաբանում է», որ «Մենուայի թագավորության ժամանակ, երբ Արարատի թագավորությունը, Ասորեստանը խաղաց հարաբերությունների մեջ էին, հավանաբար, ասորեստանցիները մասնակցել են Վանի Մեծ ջրանցքի և որոշ շենքերի կառուցմանը, Շամիրամն էլ այդ ժամանակ հնարավոր է, որ Հայքում եղած լիներ» (էջ 65): Նույն ձևով է նաև «պարզաբանվում», որ Արա Գեղեցիկը հենց Արգիշտի I թագավորն է (էջ 67), որեմն «ոչ թե Արան, այլ Մենուան կարող է սպանված լինել Ասորեստանի զորքերի կողմից: Երկի իսլաղ տարիներից հետո պատերազմ է ծագել Հայքի և Ասորեստանի միջև, և հայոց թագավոր Մենուան զոհվել է» (էջ 67): Նույն կամայականորեն դրշով Մենուա անձնանունը «ծագել է բնիկ հայերեն մե(ն) կամ սրա տարբերակ մի(ն) բառից, որ նշանակել է մեկը, միակը, նաև՝ միայնակը» (էջ 61), «Արամը բարձրանում է Սիփանի լեռները» (էջ 55), «Մոփթի հայ տիրակալները երբեմն հակվում էին դեպի Ասորեստանի օգնությունը» (էջ 80—81), Միտաննի պետության «թագավորները և բնակչության մեծ մասը» հայտարարվում են «հնդիկներ» (էջ 29) և այլն: Իսկ անփորձ ու անմեղ աշակերտները շարունակ դատապարտված են՝ հավատալ այդ բոլոր աղամամերկ հայտարարություններին, փաստերի բացահայտ խեղաթյուրումներին ու սկզբնաղբյուրների քմահաճ մեկնաբանություններին: Պատշաճավոր է Մատթեոս ավետարանիչի հառաչանքը՝ «երանի աղքատաց հողով, դի նոցա է արքայութիւն երկնից»:

Հեղինակի «պատմաշինարարական» մտքի թռիչքն անզուգական է նաև Արարատյան թագավորության «կործանման» և Երվանդունիների թագավորության «հաստատման» կառույցներում: Նա փորձում է հավատացնել, որ Ռուսա II թագավորի ժամանակ «Հայքում մեծամեծների և իշխանների մեջ երկու խմբավորում կար. մեկը հավատարիմ էր թագավորին և կողմնակից էր Ասորեստանի հետ բարեկամության պահպանմանը: Մյուս խմբավորումը զաղտնի դաշնակցել էր Մարաստանի հետ և ուզում էր մարերի ու սկյութների օգնությամբ իշխանությունը գրավել» (էջ 88): Երկրորդ խմբավորումը, ըստ նրա, երկրի տարբեր մասերից վաղօրոք փախել և հաստատվել էր Սասունում, որն «Ասորեստանի սեպագիր արձանագրություններում կոչվում էր Շուբրիա» (էջ 86): Իբր այդ դավադիրներից մեկն էր Սկայորդին, որը «հավանաբար, իշխող հայոց Արամյան թագավորական տոհմից էր», միաժամանակ «Վան-Տոսպից դեպի հարավ գտնվող Հայոց ձորի տիրակալը» (էջ 91): Իր մտադրանքները հեղինակը եզրափակում է հոգեցունց տողերով. «Եվ ահա Սկայորդու որդի Պարույրը մարական զորքերի օգնությամբ տապալեց հայոց Սարդուր թագավորին և գրավեց ամբողջ երկրի իշխանությունը: Պետք է ասել, որ Պարույրի դաշնակից մարերը դաժան էին վարվում հայոց քա-

ղաքների հետ՝ այրում էին, ավերում: Այդպես, Հայաստանը Ասորեստանի զինված խռովություններից ազատվեց...» (էջ 91):

Ահավասիկ, հեղինակը կատարելապես յուրացրել է նաև «հինը կործանելու և նորը կառուցելու» պատմական «անխուսափելի օրինաչափության» մասին դասը. «դեռափթիթ ու պատվարժան» Երվանդունիների թագավորությունը նաև «հիմնարկում է» «մաշված ու արժեզրկված», դարավոր թըշնամի Ասորեստանին «հնազանդորեն դաշնակցող» Արարատյան թագավորության փլատակների վրա: Ձևական տրամաբանության նույն կանոններով՝ այդ հնամաշ թագավորության «խորտակումը», աշուղտ, ուղեկցվել է «դաժանություններով ու ավերածություններով», — համառում է հեղինակը: Բայց մտերմաբար զգուշացնում է, որ ասորեստանցիներին կողմնակից հայերին վնաս հասցնողը հրաշանորդ Պարույրը չէր, այդ նրա «դաշնակից մարերն էին դաժան վարվում հայոց քաղաքների հետ՝ այրում էին, ավերում» (էջ 91): Հաշորդ տողում արդեն մոռանալով, որ Սկայորդուն հռչակել էր «իշխող հայոց Արամյան թագավորական տոհմից», դրում է. «Սկայորդու իշխանական սուլունը կոչվում էր Երվանդյան կամ Երվանդունի: Այդպիսով, Պարույրը մարերի օգնությամբ տապալեց Արամի հայոց թագավորական տունը, որը հրկար ժամանակ իշխում էր Հայքում: Իշխանությունն անցավ հայոց Երվանդունիների տոհմին: Մայրաքաղաք Տոսպը (Վանը) սկսեց կոչվել Երվանդական» (էջ 91):

Հեղինակին մտատանջող բաղձանքը, ի վերջո, ամբողջացվում է Պարույր Սկայորդու թագաշնորհման տեսարանով, որը դարձյալ նրա ճախրող իրականության արդյունքն է: Ահա այդ բեմական պատկերը. «Պարույրի ժամանակ Մարաստանի թագավորն էր Կիաքսարը, որի մյուս անունն էր Վարբակես: Նրա հետ միացյալ էին մարերի ցեղակից սկյութների զորքերը: Կիաքսարը դաշինք կնքեց Բաբելոնի հետ Ասորեստանի դեմ պատերազմելու համար: Նա հայոց Պարույրին նույնպես այդ դաշինքի մեջ ներգրավեց: Մ. թ. ա. 612 թվականին մարերի, սկյութների, հայերի և բաբելացիների միացյալ զորքերը պաշարեցին Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն, և հենց Նինվենի դրավելու առթիվ Մարաստանի թագավոր Կիաքսարը հայոց Պարույրին թագ նվիրեց, որով ուզում էր նրան դարձնել իրեն ենթակա թագավոր» (էջ 91):

Հանրահայտ է, որ Մովսես Խորենացին Պարույր Սկայորդուն իրավացիորեն համարում է Ասորեստանի Աշշուրբանակալ (Սարգանակալ) թագավորի (մ. թ. ա. 669—մոտ 633) և Մարաց առաջին թագավոր Վարբակեսի (մ. թ. ա. VII դարի 1-ին կես) ժամանակակիցը (Գիրք Ա, գլ. Իա): Սակայն Պարույր Սկայորդուն մ. թ. ա. VII դարի վերջերքը տեղափոխելու և մ. թ. ա. 612 թ. Նինվենի պաշարմանը մասնակից դարձնելու անսքող միտումնավորությամբ՝ հեղինակը նրան հրամցնում է իբրև Մարաց Կիաքսարես թագավորի ժամանակակից (մ. թ. ա. 625—595), վերջինիս, առանց վարանելու, նույնացնելով Վարբակեսի հետ: Փույթ չէ, որ Պատմահայրը ճշտությամբ հիշատակում է նաև Կիաքսարեսին՝ իր գահակալման տարիներով հանդերձ (Գիրք Ա, գլ. Իբ): Հետևաբար՝ զավեշտական է նաև հեղինակի այն եզրակացությունը, թե «Նինվեն գրավելու առթիվ Մարաստանի թագավոր Կիաքսարը հայոց Պարույրին թագ նվիրեց, որով ուզում էր նրան դարձնել իրեն ենթակա թագավոր»:

Անկեղծորեն՝ հեղինակի բազմաթիվ անընդհատությունները չեն ենթարկվում գրադատության կամ մեկնաբանման, հենց միայն այն պատճառով, որ անհեթեթ են: Պատմության առարկան, ինչպես և ամեն մի գիտություն, որոնում է, աշխատաջան հետազոտություն, հարցեր պարզաբանող առանձնահատուկ մտածողության ձև: Մինչդեռ սույն գրքի հեղինակի համար պատմության առարկան վերածվել է որոշակի շահեր հետապնդող զբաղմունքի կամ զվարճալի մտավոր զբոսանքի: «Ամեն ինչի մասին մի քիչ» մակերեսային տեղեկությունները, որոնք նստվածք են տվել հեղինակի հիշողության մեջ.

և բորբոքել «պատմաբան» դառնալու նրա երևակայությունը, ի վերջո, հանգեցրել են «ամեն ինչ գիտեմ» անառողջ ու սնապարծ զգացողության: Եվ «գիտելիքներով առնցիկ ուսյալը» արդեն համոզված է, որ անձնացույց մտավորականի կամայականությունները լիովին բավարար հիմք են՝ պատմության շափազանց բարդ ու խրթին հարցերին դյուրութեամբ պատասխանելու համար: Իր դատողություններում նա միշտ ինքնավստահ ու կատաբորիկ է, որովհետև դադարել է ինքն իր հետ վիճելուց, ինքնաշնորհատությունից և ճշմարտությունը հարգելուց:

«Պատկերազարդ պատմություն հայոց» գրքի արդարացի դատավճիռը թերևս կայացրել է հրատարակիչը. ընդմիջտ վավերացնելով այդ խալտառակ պարսավագիրը, նա վերստին ապացուցում է այն հին ճշմարտությունը, որ կեղծ գիտության դեմ պայքարելու արդյունավետ և դաժան պատժամիջոցը դրա տպագրությունն է: Հայագիտության անդաստանում այդ գիրքը գիտական անարխիայի առաջին «ինքնապարսավ հուշարձանը» չէ, բայց աղոթենք Բարձրյալին, որ վերջինը լինի:

Այնուհանդերձ, պիտի նաև շնորհակալ լինենք հեղինակին, թեկուզ այն բանի համար, որ նա տարիներ շարունակ իր տագնապալից գրքերով ու հոգվածներով աշխրջության կող է անում մեր որոշ հորանջող պատմաբաններին: Չէ՞ որ քիչ հեղինակներ են հանձն առնում նման «աշխատանք», որի վարձն ու գինը, վերջին հաշվով, գիտնականների զայրույթն ու ատելությունն է: